հայցի առարկայի փոփոխության մասով պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու մասին միջնորդություն, որը Դատարանի 26.03.2026 թվականի որոշմամբ բավարարվել է և «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի համար սահմանվել է պետական տուրքի գծով արտոնություն՝ ներկայացված հայցադիմումի առարկայի փոփոխության մասով պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է և որոշվել է այդ հարցին անդրադառնալ եզրափակիչ դատական ակտով:

Դատարանն այս համատեքստում արձանագրում է նաև, որ «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի («Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև 15.05.2020 թվականին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2020/3Շ-5» ծածկագրով պայմանագրի Հավելված թիվ 1՝ «Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների օրացուցային գրաֆիկ»-ի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը՝ ***<u>ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքումկողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո</u>***, հետևաբար պարզ է դառնում, որ վերոնշյալ գնման ընթացակարգը կազմակերպվել է **<u>«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա</u>**, այսինքն՝ տվյալ դեպքում *Հայցվորի կողմից ներկայացված՝ պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն ստորագրելուն և Հայցվորին տրամադրելուն պարտավորեցնելու* պահանջի մասով վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 100.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է Պատասխանողից բռնագանձել նաև նախապես վճարված պետական տուրքի գումարն, այսինքն՝ տվյալ դեպքում առկա է **<u>գրավոր միջնորդություն</u>**՝ պետական տուրքի հետ կապված պահանջի մասով, իսկ հայցն ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 70.000 ՀՀ դրամ՝ որպես վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու, պայմանագրի կամ դրա կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական

արձանագրություն ստորագրելուն և Հայցվորին տրամադրելուն պարտավորեցնելու, որպես հետևանք գումար վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի («Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև 15.05.2020 թվականին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2020/3Շ-5» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծումը,

պարտավորեցնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ստորագրել և «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին տրամադրել թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2020/3Շ-5» պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն և վճարել այդ պայմանագրի գնի չվճարված հինգ տոկոսի չվճարված մասն, այն է՝ 79.236.244 (յոթանասունինը միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 18.03.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի բռնագանձել 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE8B-6A3D-4B1A-B2C8 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am